ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/22 «22» 01 2026 թ.

<<ՀՈՒԴԻՍ>> ՍՊԸ-ի տնօրեն
Հ. Տոնոյանին
(ՀՎՀՀ 02896992)
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Վարդանանց փ.շ.18/2
Էլ. հասցե՝ hoodiesarmenia@gmail.com
Հեռ.՝ +37499026021

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության և «ՀՈՒԴԻՍ» ՍՊԸ-ի միջև 03.02.2025թ. կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՈՋ/2025/Լ-19-3 ծածկագրով պայմանագրի և 06.03.2025թ. թիվ 1 համաձայնագրի շրջանակներում «ՀՈՒԴԻՍ» ՍՊԸ-ն պայմանագրի 4-րդ չափաբաժնի մասով պետք է մատակարարեր ընդհանուր 500 հատ մարտական համազգեստներ, որոնք վերջինս չի մատակարարել:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից 06.10.2025թ. թիվ 27/631 գրությունով ծանուցվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետի խախտման մասին: «ՀՈՒԴԻՍ» ՍՊԸ-ի կողմից մինչ օրս չի մատակարարվել վերոնշյալ ապրանքատեսակը և չի կատարվել պայմանագրային պարտականությունները, խախտվել է Պայմանագրի 2.1.1 կետը, որը սահմանում է, որ «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել»:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0.05 տոկոսից:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և «ՀՈՒԴԻՍ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՈՋ/2025/Լ-19-3 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«ՀՈՒԴԻՍ» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր սահմանված տույժը՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար՝ մատակարարման ենթակա /մարտական համազգեստներ/, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0.05% չափով՝ 14 աշխատանքային օրերի նկատմամբ՝ 33600 (երեսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, սահմանված տուգանքը՝ 0.5% չափով՝ 24000 (քսանչորս հազար) ՀՀ դրամ՝ փոխանցելու ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 972000 /ինը հարյուր յոթանասուներկու հազար/ ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման գումար 648000 /վեց հարյուր քառասունութ հազար/ ՀՀ դրամը փոխանցելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N900008000698 և N900008000664 հաշվեհամարներին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «ՀՈՒԴԻՍ» ՍՊԸ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կապ.՝ Լ. Սահակյան
Հեռ. /010/ 59 60 21